



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ


Հ. Յ. ՊԵՂԱԿՐՈՆ ՌԻՆՑԵՐՈՒ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԴՈԿՏ. Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ

ՅԵՂԱԿՐՈՆ ՀԱՐԺՈՒՄԸ

ՊՈՍՏՈՆ

1935



Գրության մասին պահանջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հ. Յ. Գ. ՅԵՎԼԻԿՈՆ ԱԽԵՏԵՐՈՒ ԿԵՐՊՈՒՆՈՒՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

329.14

Բ

ԳՈՒՅ. Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ

Առաջնակ է 1961 թ.

ՅԵՂԱԿՐՈՆ ՀԱՐՁՈՒՄԸ

Հ 6642

ՊՈՍՏՈՒ
1935



A II
10241

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Յեղակրօն շարժումը կը բոլորէ իր երկրորդ տարին :

Հայ նոր սերունդի այս շարժումին առաջին օրերէն իսկ պարզ էր անոր գտումը, —դառնալ Սփիւռքի ազատատենչ հայութեան երիտասարդական կազմակերպութիւնը :

Զգտումը, սակայն, չէր բաւեր : Անիրաժեշտ էր փորձով ցոյց տալ որ այդ հնարաւոր է :

Ու շարժումին փորձարկութեան վայրը եղաւ Ամերիկան, որ ժամանակակից քաղաքակիրք երկիրներու առաջին կարգին վրայ կը գտնուի :

Իր վերջնական ճեւակերպումը ստանալէ յետոյ, մեր կազմակերպութեան գործունեկութեան մէկ տարին մեզի բերաւ այն խոր համոզումին թէ՝ Ցեղակրօնեթեան հանդեպ տածած մեր հաւատքը կատարելապէս արդարացած է, այսինքն այս կազմակերպութիւնը պիտի ըլլայ տեւական ու իր մէջ պիտի պարփակէ Սփիւռքի հայ երիտասարդութիւնը :

Եւ որովհետեւ մենք որոշապէս կը տեսնենք որ Սփիւռքի հայ երիտասարդական կազմակերպութիւններուն ննշող մեծամասնութեան հետապնդած նպատակները կը նոյնանան մերիններուն հետ, ունինք այն խոր համոզումը՝ թէ՝ անոնք իրենց խորքով ցեղակրօն են եւ անունով միայն կը տարբերին մեզմէ :

Մեր այս համոզումը փաստելու լաւագոյն ճեւը նկատեցինք երատարակութեամբ մը պարզել մեր կազմակերպութեան ծագումը, առաջադրած նպատակը, նախընտրած միջոցները եւ ապագայ կարելիութիւնները, վստահ որ Սփիւռքի մեր քոյրերն ու

Եղբայրները անոնց մէջ պիտի գտնեն նաև իրենց
ձգտումներն ու մտածումները :

Հրատարակութեան տալով այս գրքոյկը, կոչ
կ'րնենք Սփիռքի հայ երիտասարդութեան երկսեռ
անդամներուն՝ միացնել իրենց ուժերը մերիններուն
եւ Ցեղակրօնութիւնը դարձնել հաւատաւոր եւ զո-
հագերութեան պատրաստ հայ նոր սերունդին միալ
կազմակերպութիւնը :

Հ. Յ. Դ. ՑԵՂԱԿՐՕՆ ՈՒԽՏԵՐԱՅ
ԿԵԳՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յունիս 17, 1935

Պատոն

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս գրքոյկը Ցեղակրօն Շարժումը հիմնաւորե-
լու, Ցեղակրօն Կազմակերպութիւնը ներկայացնելու
եւ Ցեղակրօնութեան գործունեութեան դաշտը պար-
զելու ՓՈՐՁ մըն է :

Շարժումը նոր է եւ ունի գարգացման ամեն
կարելիութիւն: Ճիշդ ասոր համար ալ, պէտք է
սպասել տարիներու փորձարկութեան՝ ունենալու
համար վերջնական հիմնաւորում մը:

Այդ վերջնական հիմնաւորումը, սակայն, չի
կրնար մէկ անգամէն երապարակ դրուիլ, եթէ մէկէ
աւելի ՓՈՐՁԵՐ չնախորդեն այդ աշխատութեան:

Այս ըմբռնումն էր որ ընդունելի դարձուց Հ. Յ.
Դ. Ցեղակրօն Ուխտերու Կեդր. Վարչութեան առա-
ջարկը եւ գրի առնել տուաւ այս գրքոյկը :

Ա. Բ.

I

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ

1933-ին ԱՌԱՋ

Ամերիկահայ գաղութը մօտաւորապէս կէս դարձ պատմութիւն ունի, սակայն ամերիկահայ նոր սերունդի մասին որոշ մտահոգութիւն սկսած է նըկասուիլ վերջին տասնամեակի ընթացքին միայն:

Առոր պատճառը պարզ է ամէն մէկ անձի, որ քիչ թէ շատ ծանթ է այս գաղութի կեանքին: Արդարեւ, մինչեւ 1920 թուականը, Ամերիկա հաստատուած մէր Հայրենակիցներուն ճնշող մեծամասնութիւնը չէ խորհած մնայուն կերպով այս երկրի մէջ բնակելու մասին: Այդ շրջանին նոր Աշխարհ և կող Հայերը, շատ չնչին բացառութեամբ, ժամանակառ կայան մը կը նկատէին Միացեալ Նահանդները, ուր իրենք դաած էին հալածանքէ աղատ մնալու ապահովութիւն և նիւթական տեսակէտէ բարօրութիւն ձեռք բերելու կարելիութիւն: Ասոնց մէծ մասին աչքը երկրի վրայ էր: Գրեթէ ամէն Հայ կը փափաքէր օր առաջ վերադառնալ իր Հայրենի քաղաքը կամ գիւղը:

Հայրենարազ տրամադրութիւնները մեծ համեմատութիւններու հասան ընդհանուր պատերազմի շրջանին, 1914–1918, երբ բոլոր փոքր աղքերու աղատազրումը կը ջատապավուէր դաշնակից երկիրներու զեկավար տարրերուն կողմէ: Այս տրամադրութիւնները հասան իրենց քաղաքնակէտին, երբ

1918 Մայիս 28-ին յայտարարութեցաւ Հայաստանի անկախութիւնը՝ ժողովրդավար սկզբունքներու վրայ հիմնուած Հանրապետութեամբ :

1919-ի և 1920-ի ընթացքին յաղթականներու միջեւ առաջացած հակամարտութիւնները, ինչպէս նաև Միացեալ Նահանգներու Ծերակոյանին դիրքը Նախազահ Ռւբենընի հետապնդած քաղաքականութեան հանդիպ, ամենին աւելի աննպաստ անդրադարձումն ունեցան Հայերուս ճակատազրին վրայ : Հետեւանքն եղաւ այն որ՝ 1920-ի Դեկտեմբերին Հայաստան դարձաւ Սովիէթ Հանրապետութիւններու Միութեան մէկ ինքնավար նահանգը :

Այդ թուականէն սկսած, հետզհետէ տկարացան Գաղութահայութեան հետ նաև Ամերիկահայութեան Հայաստան փոխադրուելու յոյսերը : Մեր Հայրենակիցները հաշտուեցան այն զաղափարին հետ թէ՝ իրենք տուն-տեղ պիտի ըլլան այս երկրին մէջ եւ գէթ մօտաւոր ապազայի համար պէտք չէ մտածեն Ամերիկայէն հեռանալու մասին :

1920-ին յաջորդող տարիներուն՝ ամերիկահայ գաղութի մէջ շատցան ամուսնութիւնները, որոնց հետ նաև ծնունդները : Ու երբ այս երկրին մէջ ծընածները սկսան ըլլալ 6, 7 եւ աւելի տարեկան, սկսան աւելի վարժ, հետեւաբար աւելի սիրով խօսիլ անդլիերէն, — հայ ծնողներու եւ հայ կեանքը առաջնորդելու կոչուած ղեկավարներու աչքերը բացուեցան :

Սկզբնական շրջանին ծայր տուաւ տարտամ մըտահոգութիւն մը, որ հետզհետէ սկսաւ անհանգըտացնել : Որդը կը կրծէր իր զաւակներու ապա-

դան մոայլ տեսնող ծնողներու եւ Հայութեան ապագայով մտահոգուած զեկավար տարրերու միտքը :

Հետզհետէ պարզուեցաւ որ ամերիկահայ դըպրոցները, եթէ մինչեւ իսկ կրկնապատկուին ու եռապատկուին, չնն կրնար կանխել մեր նոր սերունդին սպասնացող վահանգը : Ուրիշ միջոցներու մասին խորհուղները մատի վրայ կրնային համբուլի : Դըպրութիւնն այստեղ էր հասած որ՝ մինչեւ իսկ հանրային կարծիք ու միտք առաջնորդելու կոչուած անձեր, դպրոցական հանդէսներու բնմերէն անգամ, դովելով հանդերձ թափուած ճիգերը, նոր սերունդի ձուլումը կը նկատէին անխուսափելի, որովհետեւ շրջապատող պայմանները շատ գորաւոր եւ միեւնոյն ատեն հրապուրիչ էին, տնտեսական թէ մըշակութային տեսակէաններէ :

1930-էն յետոյ հետզհետէ աւելի շատցան այս երկին մէջ ծնած ու մեծցած հայ մանուկներն ու պատանիները, որոնց մօտիկ ապագան իրենց կաշին վրայ արդէն իսկ կը զգային Հին Աշխարհի մէջ ծնած, բայց Միացեալ Նահանգներու մէջ իրենց երկրորդական ու բարձրագոյն ուսումը ստացած երկու երիտասարդները : Բացի ծնողներէն ու զեկավար շրջանակներէն, մեր նորագոյն սերունդին ճակատագիրը մտահոգութիւն սկսաւ պատճառել նաև նորահաս երիտասարդութեան :

Ու մինչ 1925-1930 շատ քիչերը նոր սերունդին սպասնացող վասնդին հակազդող միջոցներու անհրաժեշտութիւնը կը շեշտէին, 1931-էն յետոյ օրէ օր բազմացաւ այսպիսիններու թիւը : Կեանքի հրամայական պահանջը ցցուեր էր մարդոց աչքերուն

առջեւ ու կը պարտագրէր ինքինքը : Բան մը պէտք է ընել խօսքերը յաճախ կը լսուէին :

Բան մը պէտք է ընել, թայց ի՞նչ :

Օտար հորիզոններու տակ, հոկայ քաղաքակըրթութեան մը հարթիչ զլանին ենթակայ է նոր սերունդը : Ամերիկեան կանոնաւոր ու ամէն յարժարութիւններով օժտուած զպրոցներէն յետոյ՝ շատ աննպաստ պայմաններ ունեցող հայ զպրոցները, իրենց նիւթական ու բարոյական խիստ պակասաւոր միջոցներով, չեն կրցած կանխել վատանդը տակէ առջ ու պիտի չկրնան տարրեր արդիւնք տալ տակէ ետքն ալ, եթէ մինակ մնան :

Նոր սերունդը հայ պահելու միակ միջոցը հայեցի դաստիարակութիւնն է, որ կրնայ արուիլ միմիայն Մայրենի Լեզուի, Աղղային Պատմութեան, Հայրենի Մշակոյթի ըստ ամենայնի հիմնաւոր ծանօթացումով : Այս ընելու համար՝ զպրոցի կողքին ու անկէ առաջ այդ նպատակի հետապնդումին պէտք է լծել հայ ընտանիքը : Եթէ հայ ծնողները եւ ընտանիքին չափահաս միւս անդամները չնպաստեն զպրոցի ճիգերու արդիւնաւորումին, իրենք ալ չդառնան հայեցի զաստիարակութեան մէկ-մէկ գործիչներ, կարելի չէ վստահութեամբ նայիլ մեր նոր սերունդի ապադային :

Այս ըմբռնումին արդիւնքն էր 1932-ի Յունուարին ԱՐՓԻ Պարրերականին երեւումը :

Սակայն այս ճամբան երկար էր ու դժուար, թէեւ ապահով : Ասոր համար անհրաժեշտ էր տարիներու տքնաջան աշխատանք : Մարդիկ հեւ ի հեւ կը վազէին, մինչ այս ըմբռնումը կը պահանջէր

նստիլ քիչ մը, մոռնալ առօրեայ բազմապիսի հոգերը, մէկ կողմ դնել ընթացիկ զուարձութիւնները, դադրիլ օրը օրին ապրելէ, պատրաստուիլ ապացային համար. մեր նորահաս սերունդը մեծցնել ո՛չ միայն տնահասական, այլեւ ազգային պայքարի համար :

Անշուշտ, այս անհրաժեշտ է, բայց կարելի է աւելի դիւրին միջոցներով հասնիլ այդ նպատակին :

Ո՞րմ է այդ :

Պատասխանը շուտ գտնուեցաւ, այն ալ 1932-ի երկրորդ կէսին, Հայրենիք Օրաթերթի բացած մէկ հարցարանի պատասխաններուն շնորհիւ, մեծադառյն մասով տրուած նոյն ինքն նոր սերունդին պատկանող երկսեռ պատանիներէ ու երիտասարդներէ :

Ծանօթացուցէ՛ք մեզի հայ ժողովուրդի պատմութեան եւ մշակոյթին՝ մեզի ընտանի անգիերեն լեզուով :

Պահանջը հասկնալի էր ու նաեւ նպատակայարմար՝ իրր ընդհանուր հետաքրքրութիւն արթընցնելու միջոց, սկզբնական շրջանին համար : Ուսկսան անդիւերէն հրատարակութիւնները հայ նոր սերունդին համար :

Նախ Հայրենիք Օրաթերթի քանի մը սիւնակները յատկացուեցան անդիւերէն բաժնին : Յետոյ սկսան անջատ հրատարակութիւններ նիւ եորք, ևս Անձէլէս եւ Պոստն: Armenian Mirror, Armenian Spectactor, Armenian Reporter, Armenian Youth և Hairenik Weekly կը չարունակուին 2-3 տարիներէ ի վեր :

Սկսան նաեւ փորձեր կատարուիլ՝ հայ նոր սերունդը կապելու գոյութիւն ունեցող կազմակերպութիւններուն, — կուսակցութիւններ, Հ. Կ. Խաչ, Հ. Բ. Բ. Միութիւն և այլն:

Զանազան կազմակերպութիւններու աւելի կամ նուազ օժանդակութեամբ՝ կեանքի կոչուեցան Ասդրիլեան Սաներ, Հայորդիք, Որդիք Հայաստանեայց, Ճիւնըր Լիկեր, Սան-Սանուիիներ և այլ պատանեկան և երիտասարդական միութիւններ :

Այս բոլորէն պարզ է թէ՝ ամերիկահայ նոր սերունդը հայ մեծցնելու անհրաժեշտութիւնը օրուան պահանջն էր այլիւս 1933-ի ամառը, երբ այս գաղութի զանազան կեղրոններէն սկսաւ լսուիլ հըզօր ձայնը Գ. Նժղեհի, որ հանդիսացաւ ցեղակրօն շարժումին տաղանդաւոր քարոզիչն ու նոր սերունդի այս կազմակերպութեան հիմնադիրը :

II

ՇԱՐԺՈՒՄԻՆ ՍԿԻԶԲԸ

Երկու տարի առաջ ամերիկահայ նոր սերունդին մէջ ծայր տուած այս շարժումը թէեւ իր էութեամբ հին է, բայց ճեւով նոր ըլլալուն՝ անսովոր հետաքրքրութիւն արթնցուցած է թէ' հանրութեան և թէ հայ մամուլին մէջ:

Եթէ ուղինք կարճ ասութեամբ մը սահմանել այս շարժումին էութիւնը, կը թուի թէ ցեղային ձգտումներու իւ արժէքներու վերաբարձում բառեր պիտի բաւեն: Ասոր համար է որ շարժումին էութիւնը կրնանք կոչէլ հին: Զէ՞ որ ժողովուրդի մը ցեղային յատկութիւնները, աւանդութիւններն ու սովորութիւնները կուղան նախնական ժամանակներէն և թէեւ զանազան ազդեցութիւններու հետեւանքով փոփոխութիւններ կը կրեն, բայց կը պահեն իրենց հիմնական դիմերը, որոնք դարերու հնութիւն ունին, կը կաղապարեն ցեղային ձգտումները և ճիշդ առով ալ կ'ապացուցաննեն իրենց արժէքի անառարկելիութիւնը:

Ճեւով նոր է այս շարժումը, եւ այս կրկնակ իմաստով — 1. Շարժումը խորհրդանշով բառը. 2. Դաւանանքի սահմանումին և քարոզչութեան առանձնայատուկ կերպը:

Առաջինը՝ ցեղակրօն, նոր բառ մըն է, որ նախ խորթ կը հնչէ ունկնդիրի ականջին, բայց խորթութեան այս զգացումը հետզհետէ տեղի կուտայ և բառը կը դառնայ ընտանի, մինչեւ իսկ ախորժալուր:

Երկու գոյականներու (այս պարագային ցեղ
եւ կրօն) միացումով բարդ բառ մը շինելը հակա-
ռակ չէ հայ լեզուի բառակազմական կանոններուն :
Հայերէնի քերականութեան քիչ թէ շատ ծանօթ ա-
մէն դպրոցական կրնայ թուել բազմաթիւ բարդ
բառեր, որոնց բաղկացուցիչ տարրերը երկու դո-
յականներ են :

Կարեւորը նման բարդութիւններուն տրուած ի-
մաստն է, որ ժամանակի ընթացքին աւելի ու աւելի
որոշ կը դառնայ, երբեմն տարրեր իմաստներու ալ
ծառայելով :

Ներկայ պարագային ցեղակրօն բարդութեան
աւելի հասկնալի արտայայտիչը կրնար ըլլալ ցեղա-
պաշտ բառը, որ սակայն չունի առաջնին խորհըր-
դաւորութիւնը, հետեւաբար նաև ձգողական ոյ-
ժը : Կը թուի թէ այս մտածումը մեծ նշանակութիւն
ունեցած է բառին ընտրութեան միջոցին :

Շարժումը բնորոշող բառէն շատ աւելի մեծ
նշանակութիւն ունի քարոզչութեան ձեւը, — կարճ
ու կտրուկ նախադասութիւններ, պատզամի ձգտող
շեշտադրութիւն եւ՝ որ դլանորն է, ի խորոց սրտի
բխած խօսքի հաղորդականութիւն, որոնք կը դրա-
մեն ունկնդիրը, կը յուզեն անոր սիրտը եւ կը խմո-
րեն միտքը :

* * *

Ինչո՞ւ այս պահանջը, — դարձ դեպի ցեղային
ձգտումներն ու արժեքները :

Պէտք է խօսիլ այս մասին անոր համար որ՝ ե-
թէ այդ արժէքներու վերաբժարծումը Լատիններէնի
կամ Զին Յունարէնի վերակենդանացումի փորձե-
րուն նմանող շարժում մըն է, չի կրնար տեսական

բլիստ, որքան ալ անոր քարողչութեան սկզբնաւորութիւնը յաջող ըլլայ, չնորհիւ ընտրուած ձեւի նորութեան ևւ ձողականութեան:

Ժողովուրդներու մէջ միշտ ալ կ'ապրին ցեղային ճատումներն ու արժէքները, որոնց չնորհիւ այս կամ այն ցեղին կնիքը կրող ազգը կը յարատեւէ, կը ստեղծադործէ ու կը պայքարի: Մինչեւ անգամ այն տառն, երբ աչքի չեն զարներ ցեղային ճատումներն ու արժէքները եւ երբ ո'չ ոք կը խօսի անոնց մասին, անոնք կը կատարեն իրենց վճռական դերը՝ ժողովուրդի ու ազգի կեանքին մէջ, եթէ ո'չ զզալի՝ զէթ բնազդական ձեւով:

Իսկ երբ ակդերը կ'ապրին այնպիսի ժամանակաշրջաններ, երբ կը սկսին վտանգի ենթարկուիլ ցեղային ճատումներն ու արժէքները. Երբ ասոնց ազգեցութիւնը կը տկարանայ ժողովրդական լայն խաւերուն մէջ. Երբ օտար ցեղերու արժէքները՝ խորթ ըլլալով հանդերձ, կը սկսին տեղ գրաւել զանգուածներու հոգիներուն մէջ;— մրափող առիւծը արթնցնելու եւ ցեղը ցնցելու պահանջը կը դառնայ հրամայական:

Նման ցնցումներ շատ է ունեցած հայ ժողովուրդը: Եթէ սովենք թուել քանի մը գլխաւորները, կրնանք յիշել Գիբերու Գիտը ևւ Վարդանանց Պատերազմը (Ե. դար), Պայքարը Արաքներու դէմ եւ Բագրատունիներու հարառութեան հիմնումը (Ը. Եւ Թ. դարեր), Պայքարը Թաք-ար-Սելջուկ հորդաներուն դէմ եւ Ռուբինեան իշխանութեան հաստատումը (Թ. Ֆ. դարեր), Վերածնութեան շրջանը (Ժ. Դ. դար) ևւ Ազատագրական պայքարը վերջին 4-5 տասնամեակներու ընթացքին:

Եթէ բաղդատինք մեր ժողովուրդի ներկայ կացութիւնը վերսիշեալ շրջաններու վիճակներուն հետ, կը տեսնենք որ այժմ կ'ապրինք շատ աւելի վտանգաւոր ու սպառնալից պայմաններու տակ :

Խոսքը չի վերաբերիր, ի հարկի, իր հայրենի հողին կառչած այն մէկ միլիոն Հայութեան, որ Հայաստանի մէջ, հոծ հաւաքականութեամբ կ'ապրի իր ուրոյն կեանքը : Ի՞նչ պայմաններու տակ ալ գտնուի Հայութեան այս հատուածը, հայրենի հողին կառչած ըլլալը, այդ հողին վրայ բարձրացած ու կանգուն մնացած յիշատակարանները, բերնէրեան պատմուող աւանդութիւնները, սերունդէսերունդ փոխանցուող սովորութիւնները, Մայրենի Լեզուն եւ սեփական Մշակոյթը այնպիսի առաւելութիւններ են, որ անաղարտ կը պահեն անոր մեծամասնութեան հոգեկան-Փիղիքական հիմնական պիծերը :

Տարբեր է պատկերը գաղութներու մէջ : Որքան հեռու Մայր Հայրենիքն, այնքան աւելի սպառնալից են մեր գաղութներու գլուխին վերեւ կուտակուած ամպերը : Ճիշդ ասոր համար ալ բնական պիտի գտնենք որ ցեղակրօն շարժումը ուժգին թափով մը սկսած ու զարդացած է Միացեալ Նահանգներու մէջ, ուր գեռ երկու տարին չըրացած կազմուած են 60 Ուխտեր, մօտ 2300 երկսեռ անդամներով :

Ու կարելի է ամէն կասկածէ վեր համարել, որ այս շարժումը ո'չ միայն պիտի ծաւալի բոլոր Գաղութներու մէջ, այլ եւ պիտի խորանայ հետզհետէ, որովհետեւ անոր խարիսխը կը կազմեն ցեղային ձգտումներն ու արծէքները, որոնք կը հանդչին ամէն մէկ Հայորդի հոգիին խորը, կենդանի են, հոգ չէ թէ շատ անդամ բնազդական վիճակի մէջ :

III

ՑԵՆԱԿՐՈՆՈՒԹԵԱՆ ԻՄԱՍՏԸ

Ինչպէս ամէն նոր շարժում, այնպէս ալ ծեղակրօնութիւնը մէկ անդամէն չկրցաւ ըմբռնելի դառնալ հայ հասարակութեան. իր մասին թեր ու դէմ կարծիքներ լուսեցան բեմերէն ու մամուլի էջերէն։ Այս երեւոյթը ինքնին կը ցուցնէ թէ ո՛րքան անհրաժեշտ է պարզաբանել շարժումին իմաստը։

Երբ սկսաւ ցեղակրօնութեան քարողչութիւնը, ոմանք կարծեցին թէ այս շարժումը կը ձգտի վերակենդանացնել նախնական կեանքը։ Ուրիշ խօսքով, ոմանք ունեցան այն տպաւորութիւնը թէ՝ այս շարժումին նպատակն է երես դարձնել դարերու քաղաքակրթութեան արդիւնքներուն եւ դառնալ նախնական նահապետական կեանքին։

Ասիկա, անշուշտ, բացարձակ թիւրիմացութիւն մըն է։ Ո՞չ ոք կրնայ կեանքի ամենօրեայ պահանջները բաւարարող լաւագոյն միջոցները մէկ կողմ դնել եւ ենթարկուիլ նախնական կենցաղը վերահստատելու փորձութեան։ Այսպէս, ուրեմն, քաղաքակրթութեան բարիքներէն եւ կենցաղի ժամանակակից յարմարութիւններէն հրաժարելու մասին խօսք անդամ չի կրնար ըլլալ։

Ուրիշներ աւելորդ դաշն ցեղապաշտութիւն քարողող շարժումը, յայտարարելով թէ՝ ազգասիրութիւն եւ հայրենասիրութիւն գաղափարները երենց մէջ կը պարփակեն նաեւ ցեղայինը։

Այս ալ ուրիշ թիւրիմացութիւն մըն է։ Մեր օրերու աղգերն ու հայրենիքները, ուրիշ խօսքով

պետութիւնները իրենց մէջ կը պարփակեն մէկէ աւ-
ևլի , երբեմն բազմաթիւ ցեղեր : Այս օրուան Զուի-
ցերիայի բնակչութիւնը կազմող տարրերը հաւա-
սարապէս իրենցը կը նկատեն այդ երկիրը և կը սի-
րեն իրենց հայրենիքը , բայց և զիտակ են իրենց
ցեղային արժէքներուն , որոնք կը տարրերին ի-
րարմէ : Իսկ ազգ բառը սկսեր է ստանալ նոր իմաստ
մը , որ մօտաւորապէս կը նոյնանայ պետութեան
Հետ : Այսպէս , Հիւսիսային Ամերիկայի Միացեալ
Նահանգներու բազմացեղ ու բազմալեզու տարրե-
րը՝ եթէ դեռ չեն կադրած , կազմելու ճամրուն մէջ
են ամերիկեան ազգը :

Այս օրինակները կը պարզեն թէ որքա՛ն թեթեւ
վերաբերում ցոյց տուած պիտի ըլլանք , եթէ առա-
ջին իսկ ակնարկէն չուզենք տեսնել ցեղապաշտու-
թեան և ազգափրութեան տարրերութիւնը :

Կան մարդիկ ալ՝ որ կ'ըսեն .— Ժամանակակից
քաղաքակիրթ ազգերու մէջ խառնուած ու կորսուած
են ցեղերը , հետեւաբար աւելորդ է խօսիլ անդոյ
արժէքներու մասին :

Այս ալ երրորդ թիւրիմացութիւն մըն է : Ճիշդ
է որ ժամանակակից մեծ ազգերը իրենց մէջ ձուլած
են տարրեր ցեղերէ սերած տարրեր : Սակայն ,
փաստ է նաեւ որ՝ իւրաքանչիւր ազգի մէջ նկատելի
է այս կամ այն ցեղին դրած կնիքը : Եւ եթէ եւրո-
պական մեծ ազգերը դեռ կը խօսին անգլեւսաքսոն ,
ոռման կամ սլաւ ցեղերու մասին , մենք ոեւէ պատ-
ճառ չունինք անտեսելու նման արժէք մը :

Ուրեմն , ցեղակրօն շարժումը ո'չ նախնակա-
նութեան դառնալու կոչ մըն է , ո'չ ազգասիրութեան

ուրացում, ո՞չ ալ մեռած արժեք մը վերակենդանացներու փոքր :

* * *


Որպէսզի աւելի որոշ բլլայ այս շարժումին ի-
մասար, անհրաժեշտ է պարզելթէ՝ ի՞նչ է ՑԵՂ, ըս-
տածը :

Նախնական բմբոնումով ցեղը մեծ ընտանիք մըն
է, որուն ամէն մէկ անդամը հարազատ է միւսին,
այսինքն ցեղի մը պատկանողները իրենց երակ-
ներուն մէջ կը կրեն նոյն արիւնը : Այսպիսի մեծ
բնուանիքի մը իւրաքանչիւր անդամը պարտաւոր
կը զգայ զահերու իր անձը միւսի կեանքին ու պա-
տիւն համար :

Իւրաքանչիւր ցեղ ունի իր ուրոյն լեզուն, կրօ-
նը, աւանիուրիւնները, սովորուրիւնները, նիստ ու
կացը, մէկ խօսքով՝ իր ուրոյն ըմբոնումները կեան-
քի, պատիւի ու կենցաղի մասին : Ասոնք կը ներ-
կայացնեն իր արժէքները, որոնք ձեւաւորուած ու
կաղմաւորուած են ժամանակի ընթացքին, իրենց
վրայ կը կրեն հնուրեան կնիքը, այսինքն դարերու
ասրբազագրիչ ազգեցութիւններուն կրցած են դի-
մազգել եւ հետեւարար ժամանակի ընթացքին
դարձած են ցեղին սրբութիւնները, որոնց անա-
զարտ պահպանումին հախանձախնդիր է ցեղին ա-
մէն մէկ անհատը :

Ամէն ցեղ ունի իր ուրոյն հաւաքական կեանքը,
որուն չի կրնար միջամտել ուրիշ ուեւէ խմբաւորում :
Այլ խօսքով, ամէն ցեղ կ'ուզէ պատօրէն ապրել իր
հասկցած ձեւով եւ իր այս աղատութիւնը կը ջա-
նայ պահել ամէն դինով :

Ցեղը, ուրեմն, մեր օրերու աւելի կամ նուազ



բաղմամարդ ու ցրուած ժողովուրդներու նախնական կորիզն է, որ ունեցած է իր սահմանափակ անդամներուն թիւը և տարածութեամբ փոքր բնակավայրը :

Իր այս ձեւի կենցաղին հետեւանքով՝ ամէն մէկ ցեղ ունի որոշ յատկանիշեր, մարմնական թէ հողեկան, որոնց հարադար ու հնարաւոր չափով անխառն պահպանումը միայն կ'երաշխաւորէ ցեղին տեւականացումը :

Այսպիսով, ցեղը չի ճանչնար ընկերային ուեւէ տարբերութիւն, որ բաժնէ իր անդամները իրարմէ : Ցեղին մէջ չկան հարուստներ ու ազքատներ, տիրող ու հպատակող դասակարգեր, այս կամ այն դաւանանքին պատկանող յարանուանութիւններ կամ քաղաքական ուղղութիւններ : Այլ խօսքով, ցեղը հնարաւոր հաւասարութեան իրականացումն է ընկերային կեանքի մէջ :

Իւրաքանչիւր ցեղի անդամներուն կեանքի դրեթէ նոյնութեան հետեւանքով առաջ եկած սերտ կապը եւ անձնազոհութեան ողին կը կազմեն ցեղին ոյժը, որ միաժամանակ կը հանդիսանայ իր պայքարի ու ինքնապաշտպանութեան անսպառ ազրիւրը : Ասոր համար է որ ցեղը վերապահութիւն ունի տարներուն հանդէալ եւ կը ջանայ մօտենալ իրեն նմանող տարրերու միայն, եթէ անհրաժեշտ դառնայ չփումը :

Բնական կեանք մը կ'ապրի ցեղը՝ շարժուն բայց եւ ժուժկալ : Այս պատճառով ալ ցեղը միշտ երիտասարդ է, մարտունակ եւ ազատատենչ : Ասոնք կ'երաշխաւորեն ցեղի տեւականացումը, որովհետեւ կ'առաջնորդեն հերոսականին :

Զանազան ցեղերու յաճախակի շփումը իր հետ
կը բերէ նախ՝ փոխադարձ ազդեցութիւններ, աւե-
լի ուշ՝ խառնուրդներ, որոնց հետեւանքով կ'առա-
ջանան ընկերային աւելի մեծ հաւաքականութիւն-
ներ,— ժողովուրդներն ու ազգերը:

Խտանուրդներու ատեն ամէն կողմ հաւասարա-
պէս չի զներ իր կնիքը նորակազմ խմբաւորման
վրայ: Ամէն ժողովուրդի մէջ նկատելի է մէկ ցեղի
դրաւոր ազգեցութիւնը, որ ժամանակի ընթացքին
կը տարածուի նաև նորեկ տարրերուն վրայ: Այս
է պատճառը որ իւրաքանչիւր ժողովուրդ ինքինքը
մերած կը նկատէ այն ցեղէն, որուն ազգեցութիւնը
մեծագոյն չափով կրած է:

Ցեղին հարազատ յատկութիւններէն, արիական
ու անձնազոհ սպիէն, մաքուր ձգտումներէն, անկո-
րինչելի առաքինութիւններէն եւ հաւասարութեան
դիտակցութենէն կը ծնին ժողովուրդի մը բոլոր
արժէքները, մարտական թէ մշակութային: Իսկ
ժողովուրդներու բացասական յատկութիւնները
արդիւնք են ոչցանկալի ազգեցութիւններու, ո-
րոնք զրեթէ անխուսափելի կը դառնան տնտեսա-
կան, ընկերային ու քաղաքական պայմաններու փո-
փոխութեամբ:

Էականն այն է որ ժողովուրդ մը պահէ իր ցե-
ղին արժէքները, որովհետեւ անոնցմով պայմանա-
ւորուած է իր դոյութիւնը: Երբ փոքր կամ մեծ
հաւաքականութիւն մը կը սկսի կորսնցնել ցեղային
արժէքները, ինքն ալ կը տկարանայ աստիճանա-
րար, մինչեւ անհետանայ այս աշխարհի թատերա-
րէմէն:

* * *

Ինչո՞ւ այժմ անհրաժեշտ է վերաբռնել ցեղային արժեքները :

Պատասխանը չառ պարզ է — սրովհետեւ անոնք վտանգուած են ու կը սպառնան ազդին դոյտթեան :

Ասկէ տասնեւհինդ տարի առաջ՝ գրեթէ ո՛չ ոք կը խօսէր ցեղի ու ցեղայինի մասին։ Այս բառերը կը յիշատակուէին այն տաեն միայն, երբ կը քննըւէր ժամանակակից ժողովուրդներու և ազգերու անցեալը, եւ կամ քաղաքակարթութեան ազգեցութենէն հետու մնացած, Ասիայի եւ Աֆրիկէի խորերը նախնական կենցաղ մը վարող մարդկային խմբաւորումներու կեանքը :

Դեռ աւելին։ Նախորդ տասնամեակներու ընթացքին, ցեղն ու ցեղայինը կարծէք կը նկատուէին արհամարհելի քանակութիւններ, որոնք մարդկային պատմութեան նախնական շրջանները կը յիշեցընէին :

Միջազգայնութեան արագ նուաճումները հրապարակ էին բերեր այնպիսի ծայրայեղ տեսութիւններ, որոնց ազգեցութեան տակ մարդիկ սկըսեր էին չնկատել անդամ թէ՝ ատոնց զուգընթաց կը տկարանան ու կը կորսուին կարդ մը հին յատկութիւններ ու արժէքներ, որոնք ճակատագրական նշանակութիւն ունին մանաւանդ տկար ազգերու համար :

Այդ հին յատկութիւններն ու արժէքները վերաբռնելու, անոնց դառնալու փորձեր եղած են այն տաեն միայն, երբ ժողովուրդ մը եւ անոր առաջնորդները նախզգացած են վերահաս վտանդ մը :

Վերջին տասնամեւակի ընթացքին ալ մենք ակա-
նառես ենք նման քայլերու : Մասնաւորապէս աչքի
կը զարնեն վաշիստ հատալիայի եւ նացիստ Գերմա-
նիայի օրինակները :

Մուսոլինի եւ Հիթլէր այնպէս կարծեցին որ
իրենց երկիրները միջազգայնութեան սիրոյն չա-
փին աւելի զիջումներ կատարեցին ու վավաքեցան
կասեցնել այդ ընթացքը : Այս երկու շարժումներն
ալ ազգայինին գառնալով չբաւականացան, այլ ի-
րենց աչքերը ուղղեցին ցեղային արձեքներուն :
Մուսոլինիի մաստիպարն է հին Հռոմայեցին, իսկ
Հիթլէրինը՝ հիւսիսային Գերմանը, որոնց մէջ Ֆա-
շիսան ու Նացին⁴կը աւսնեն իրենց ժողովուրդներու
ցեղային նախատիպարները, մարմնական թէ հո-
գեկան յատկութիւններու անսակէտէն :

Եթէ ցեղային զիտակցութիւնը վերջին տասն-
ամեակին արթնցած, արմատ բռնած ու զօրացած է
հատալիայի եւ Գերմանիայի նման մեծ ու քաղաքա-
կիրթ երկիրներու մէջ, որոնց ժողովուրդները
զրկուած ըլլալու ապրումներ ունեցած են, — որ-
քա՞ն աւելի խոր պիտի զդացուի ցեղային արձեքնե-
րու ոգեկոչումը մեզի նման վոքք ու ցըռւած ժո-
ղովուրդի մը համար, որ զարեր շարունակ ենթար-
կրւած է նմանը չաեսնուած զրկանքներու եւ այժմ
ալ կ'ապրի այլազան ցեղերու եւ ազգերու խառնա-
րան եղող ըլջաններու մէջ :

Երբ մեր ժողովուրդը, որ այժմ ցըռւած է զա-
նազան զազութիւններու մէջ, կը գտնուէր իր հայրենի
հողին վրայ ու կ'ապրէր իր հաւաքական կեանքը,
որքան կարելի է նուազ ենթակայ օտար ազգեցու-

Թիւններու, — ինքնարերարար կը պահուէին ցեղա-
յին ճգտումներն ու արժէքները :

Այս գործը կը զիւրանար մանաւանդ անով որ՝
իւրաքանչիւր նոր սերունդ կը ստանար տոհմային
կրթութիւն մը, որ հնարաւոր կը դարձնէր ո՛չ մի-
այն ապրումը, այլ նաեւ նանաչումը ցեղային ճրդ-
տումներուն եւ յատկութիւններուն :

Հիմնովին տարբեր են ներկայի պայմանները,
որոնց մէջ ալ կարեւոր է որ մեր նոր սերունդը
ճանչնայ իր ցեղին ճգտումներն ու արժէքները : Ա-
սիկա հնարաւոր է Հայ Լեզուի, Գրականութեան եւ
Պատմութեան ուսուցումով :

Ցեղային յատկութիւններու եւ ստեղծագործու-
թիւններու ճանաչումը իր հետ կը բերէ պաշտա-
մունք դէպի այդ արժէքները :

Իսկ ո՛վ պաշտամունք ունի իր ցեղին հանդէպ,
անպայման կը հաւատայ անոր ապագային ու ըստ
այնմ կը շարժի :

Եւ որովհետեւ ներկայ պայմաններուն բերու-
մով՝ զգալապէս վտանգուած են մեր ժողովուրդին
յարատեւումը երաշխաւորող ազդակները, ինչպէս
նաեւ ցեղը նանչնալու, սիրելու եւ անոր ապագա-
յին հաւատալու կարելիութիւնները .— անհրաժեշտ
է որ **Ցեղակրօնութեան** նման շարժում մը ո՛չ մի-
այն ծայր տայ, այլ եւ արմատ բռնէ Սփիւռքի հայ
նոր սերունդին մէջ, ճի՛շդ այս օրերուն :

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՑԵՂԱՅԹԻՆ ԶԳՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՐԺԷՔՆԵՐԸ

Ցեղի մը ձգտումները եւ երեւան բերած արժէքները ճանչնալու մէկ միջոց միայն կայ, — հետեւիլ այդ ցեղի դարերու պատմութեան :

Որպէսզի կարելի ըլլայ խօսիլ ցեղային այս կամ այն ձգտումի մասին, անհրաժեշտ է ցոյց տալ որ նոյն ձգտումները դարերու ընթացքին ընկերացած են ցեղին, այսինքն անոնք վաղանցիկ չեն եղած, այլ տեւական :

Անհատներու նման, ազգերու կեանքին մէջ ալ կարմիր թելի ոկտ աչքի կը զարնեն որոշ ձգտումներ, որոնց իրականացումին համար թափուած ջանքերը կը ստեղծեն տուեալ անհատին կամ ժողովուրդին արժէքները :

Այսպէս է որ՝ ցեղի մը ձգտումներն ու արժէքները ժամանակի ընթացքին կը նոյնանան : Այսպէս է որ՝ կարելի չէ մատնանշել ցեղի մը այս կամ այն ձգտումը, առանց նկատի առնելու նոյն ցեղի ստեղծագործութիւն-արժէքները, որոնք արդիւնքն են անոր ձգտումներուն :

Դարերու ընթացքին բազմաթիւ ձգտումներ անհետ կը կորսուին, որովհետեւ անոնց արդիւնք արժէքները չեն երեւիր յիտնորդներուն : Ձգտումներու մասին կը խօսուի այն ատեն միայն, երբ անոնց ստեղծագործութիւն-արժէքները կան ու կը մնան : Այս արժէքներն են կենդանի ու շօշափելի վըկաները բազմաթիւ աննիւթ ու երաղ-ձգտումներու :

Այս իսկ պատճառով, երբ խօսքը մեր ժողովուրդի ցեղային ձգտումներու մասին է, ուրիշ ունեէ միջոց չունինք անոնց հասնելու, բայց եթէ առնել ցեղային արժէքները և ասոնցմէ մակարերեւ ցեղին ձգտումները :

Ցեղային նման արժէքներ են գարաւոր անցեալ ունեցող մեր սովորութիւնները, հեթեար ները, նիստ ու կացը, բարքերը, որոնք որոշապէս կը ցուցնեն մեր ժողովուրդին առանձնայատուկ ձրդտումները :

Երբ, օրինակ, մեր հէքեաթները կը վերջանան բարիին յաղթանակով և չարին պարտութեամբ, այդ կը նշանակէ որ մեր ցեղին ձգտումն է յառաջդիմութիւն բարոյական մարդին մէջ :

Ինչ որ ժողովրդական կենցաղի ու բանահիւսութեան մէջ կ'երեւի ընդհանուր զիծերով, ցեղի մը առաջնորդող տարրերը կ'արտացոլացնեն իրենց գործերուն, արուեստի արտայայտութիւններուն մէջ,— երգ, զրականութիւն, նկարչութիւն, ճարտարապետութիւն եւայլն : Նոյն ձեւով կը կաղապարուին ցեղի մը քաղաքական ձգտումները :

* * *

Շատ բնորոշ է, օրինակ, Հայկի աւանդութիւնը :

Հայ ժողովուրդը ազատ ապրելու իր ձգտումը դրած է այդ աւանդավէպին մէջ : Ազատ ապրելու ձգտումին հետ՝ ան երեւան բերած է նաեւ ուրիշին ազատութիւնը չկապտելու ձգտումը :

Այդ աւանդութեան համաձայն, Հայկ կը փափէր ազատ ապրիլ : Բէլ կ'ուզէր իրեն հպատակեցընեւ Հայկի նման ցեղապետները : Երբ պարզ կ'ըլլայ որ Բէլ սպառնալիք մըն է իր բաղմաթիւ կողմ-

հակիցներով, Հայկ ո'չ թէ կը խորհի իրեն հպատակեցնել Բէլը, այլ ապահովել իր եւ իւրայիններու ապատութիւնը: Եւ որովհետեւ Հայրենիքի գաղափարը դեռ զոյտթիւն չունէր նախնական շրջանի ցեղերուն համար, Հայկ կը շարժի դէպի հիւսիս եւ կ'ընտրէ նոր բնակավայր մը:

Ասով երեւան կուզայ Հայ ժողովուրդի մէկ ուրիշ հիմնական ձղտումը, — խաղաղասիրութիւն: Երբ կարելի է կենսական նպատակի մը հասնիլ խաղաղ միջացներով, ինչո՞ւ կոուիլ ու արիւն թափել, Հակասակորդին հետ նաև իրեններուն արիւնը:

Խաղաղասէր՝ բայց ո'չ ամէն զինով: Այս ճըգտումը երեւան կը բերէ նոյն աւանդութեան երրորդ դրուագը, որուն հմմածայն Բէլ կը հետապնդէ Հայկի ցեղը եւ կ'ուզէ ամէն գինով իրեն հպատակեցընել: Հայկ չի համոզուիր Բէլի փաղաքշական խօսքերէն (ինչո՞ւ քեզի նման քաջ մը զրկուի տաք կլիմայի բարիքներէն ու երթայ, բնակի ցուրտ երկրի մը մէջ): Կը նախընտրեմ ցուրտ երկրի մէջ ազատապրի՝ քանի տաք կլիմայի բարիքները վայելել ու ազատութենէս զրկուիլ, — կ'ըլլայ Հայկի պատասխանը Բէլի պատգամարերին: Յետոյ ալ, Հայկ կը կոուի իր եւ իւրայիններու ազատութեան համար, կը սպաննէ Բէլը, որուն հետեւորզները խուճապի կը մատնուին բոնակալին մահէն յետոյ եւ կը փախչին:

Ի՞նչ կը հետեւի ասկէ: Այն որ՝ Հայը եղած է ազատասէր: Անոր փափաքը եղած է ապրիլ ազատ, առանց ազատութիւն ըսելով ուրիշները իրեն հպատակեցնել հասկնալու: Այս ըմբռնումին հետեւանքով է որ Հայը եղած է նաև խաղաղասէր: Բայց երբ ուրիշներ սպած են կապտել իր ազատութիւնը,

Հայր ցոյց է տուած իր մարտութակութիւնը :

Ազատասէր, խաղաղասէր եւ մարտութակ, —
ահա երեք յատկութիւններ, որոնք կը խորհրդա-
նշեն մեր ցեղի քաղաքական ձգտումները : Այդ յատ-
կութիւններուն ապացոյցները մենք կը տեսնենք
մեր դարաւոր պատմութեան ընթացքին, շրջապա-
տող պայմաններու թոյլտութեան սահմաններուն
մէջ :

Նոյն ձգտումներուն եւ յատկութիւններուն նո-
րագոյն արտայայտութիւնը կը տեսնենք վերջին
կէս դարու մեր աղատադրական շարժումներուն
մէջ, որոնք անդամ մըն ալ չեշտեցին այն ճշմար-
տութիւնը թէ՝ ցեղային ձգտումներն ու արժէքները
կը կատարեն իրենց որոշ գերը նոյնիսկ ա'յն շրջան-
ներուն, երբ անոնք չեն երեւիր սովորական աչքե-
րուն :

* * *

Ցեղային ձգտումներու լաւագոյն մէկ արտա-
յայտութիւնն է մեր հեթանոսական կրօնը, որ մեզի
կը ներկայանայ իրը ցեղային արժէքներու խու-
ցում մը :

Հեթանոսութեան աստուածները կը պատկե-
րացուէին իրը կատարելագոյն մարդիկ : Այս կը նը-
շանակէ որ հին դարերուն՝ մարդիկ իրենց փափա-
քած, բայց գլուխ հանել չկրցածը կը վերագրէին
իրենց պաշտած այս կամ այն աստծուն : Եթէ առ-
նենք մեր նախնիքներու պաշտած աստուածներէն
երեք գլխաւորները, անոնց մէջ կը տեսնենք մեր
հայրերու ձգտումները :

Մեր նախնիքներու պաշտած աստուածներու
հայրն էր Արամագդ, որ երկինքի եւ երկրի արա-
րիչն էր : Հայ ժողովուրդը իր այս աստուածը կը

կոչէր արի և մեծ, այս կը նշանակէ որ մեր ցեղը կը ձգտէր բլլալ արի ու մեծ: Ասկէ զատ՝ Արամազդ բարիքներ կը պարզեւէր ամենուն: Ան էր լիութեան եւ պտղաբերութեան խորհրդանշանը: Երկինքի եւ երկրի արարիչին վերագրուած այս յատկութիւնն ալ կը ցուցնէ որ Հայ ցեղի ձգտումն էր բարիքներ վայելել, բայց միաժամանակ բաշխել: Ուրիշները զրկելու գինով ձեռք բերուած բարիքը չէ՛ր Հայ ցեղին ուղածը, այլ ճակտի քրտինքով, արդար վասակով շահուածը:

Հեթանոս Հայերու վերազանցօրէն սիրած աստուածուհին էր Անահիտ: Մեր Հայրերը զինքը կը կոչէին Մեծ Տիկին, որ ազգին փառքն էր ու պահապան Հրեշտակը միենդամայն, կեցուցիչը: Ինչո՞ւ այսպէս:— Որովհետեւ Անահիտ ամեն տեսակի զգաստութեան մայրն էր, այսինքն կնոջական առաքինութիւններու մարմնացումը եւ ընտանեկան սրբութիւններու պահապանը:

Վահագն՝ արեւի աստուածն էր, այսինքն խաւարի թշնամին: Այս կը նշանակէ ձգտում դէպի լոյս, ջերմութիւն, կեանք, ո՛չ միայն նիւթական՝ այլ եւ բարոյական իմաստով: Իրեն տրուած վիշապաբաղ (օձասպան) մակդիրն ալ կը նշանակէ թըշնամութիւն խաւարն ու չարիքը անձնաւորող օձերուն: Վահագն հին Հայերու որսի եւ քաջութեան աստուածն ալ էր: Վիշապաբաղ մակդիրը պէտք է Հասկնալ իրականէն աւելի փոխարերական իմաստով, այսինքն չար մարդիկ, թշնամիներ հետապընդող եւ սպաննող:

* * *

Ցեղային ձգտումներու լաւագոյն արտայայ-

տութիւնն է նաեւ մեր Մշակոյթը, — Հայ Երզը,
Գրականութիւնը, Ճարտարապետութիւնը, Նկար-
չութիւնը եւ մանաւանդ Լեզուն, այնքան հարուստ,
ճկուն եւ զարգացումի նորանոր կարելիութիւննե-
րով օժտուած :

Հին զարերու Գողթան Երզերէն ոկտոծ մինչեւ
մեր օրերու ժողովրդական Լէլէները, Դիւցաղներ-
գութիւններն ու Ազգային Երզերը, Խորհնացիէն ու
Եղիշէն սկսած մինչեւ Բաֆֆի, Սիամանթօ ու Վա-
րուժան. Զուարթնոց Եկեղեցիի ևւ Անիի հրաշտ-
լիքներէն սկսած մինչեւ օտար ափերու վրայ Հայ
ճարտարապետներու կառուցած Հոյակապ շնչերը.
մեր ձեռագիրերու մէջ փայլող Մանրանկարչու-
թենէն սկսած մինչեւ Այլաղովսկի. Ոսկեղարու մեր
Ռոտանիկ Լեզուէն սկսած մինչեւ մեր օրերու Աշ-
խարհարարը կուտան մեր ցեղի ճգնումներուն եւ
ասոնց արդիւնք արժէքներուն անհատնում ապա-
ցոյցերը :

* * *

Ի՞նչ կը հետեւի այս բոլորէն : Այն որ՝ մեր ժո-
ղովուրդը դարեր շարունակ ցուցադրած է հիմնա-
կան ճգնումներ, որոնց չնորհիւ ստեղծագործած է
մնայուն արժէքներ : Այս բոլորէն կը հետեւի նաեւ
որ՝ մեր ժողովուրդը դարեր շարունակ կցած է
պահել իր ուրոյն դոյցութիւնը, որովհետեւ միշտ
ալ ամուր կառչած է իր ցեղային ճգնումներուն եւ
արժէքներուն, այսինքն եղած է՝ աշխատասկը,
ժուժկալ, առաքինի, հողին կապուած, ընտանեսէր,
գաղափարապաշտ, մարտունակ, ազատատինչ,
անձնազոհ, մշակոյթի հետամուտ եւ խաղաղասէր՝
բայց ո'չ ամէն դինով :

ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹԵԱՆ ԴԱՒԱՆԱՆՔԸ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Ցանօթանալէ յետոյ հայ ցեղի ձգտումներուն և արժէքներուն, դիւրին է ենթաղըրել թէ՝ ի՞նչ կրնայ ըլլալ կամ պէտք է ըլլայ Ցեղակրօնի դաւանանիքը : Վեր հանելու համար այդ դաւանանքի հիմնական դիմերը, Ցեղակրօնը պիտի ըլլայ .—

1. Ցեղանանաչ :— Ան պիտի ծանօթանայ իր ցեղի ձգտումներուն և արժէքներուն, որովհետեւ այս կերպ միայն կարելի է ցեղին հաւատաւոր ու ցեղապաշտ մէկ անգամը դասնալ : Ցեղակրօնը պիտի ըւլայ զաղափարապաշտ և մշակոյրի հետամուտ :

2. Առողջ՝ մարմինով եւ հոգիով :— Ցեղի ձըդտումներուն իրականացումը կը պահանջէ հոգեկան և մարմնական ոյժ, որ առողջութեամբ պայմանաւորուած է :

3. Արի ու խիզախ :— Վախկոտներն ու տատամսողները չեն կրնար դասնալ ցեղի ձգտումներուն դրօշակիբրը :

4. Մի՛շտ աւելինդիր ցեղի ձայնին :— Երբ հայրենիքը և ժողովուրդը վտանգի տակ են, ցեղը կը ցնցէ առիւծի իր բաշը ու կը մռնչէ : Պէտք է այդ ձայնը լսել ու անոր հետեւիլ գիտնալ :

5. Իրաւունիքի տէր, պարտականութեան գիտակից :— Ո՛վ իր մէջ չունի այս երկուքի համաղըրութիւնը, չի կրնար ծառայել իր ցեղին, հետեւաբար չի կրնար ըլլալ անոր արժանաւոր դաւակը :

6. Զոհարերութեան պատրաստ .— Ո՞վ ի Հարկին պատրաստ չէ զոհելու իր անձը , չի կրնար ունենալ ազատ ու ստեղծագործ կեանք , չի կրնար ըւլտը ընտանեսէր եւ Հայրենասէր :

7. Զօրաւոր կամքի տէր .— Զի բաւեր լսել ցեղին ձայնը , զիտակցիլ պարտականութեան եւ պատրաստ գտնուիլ զոհարերութեան : Վերջինը դլուխ հանելու համար՝ անհրաժեշտ է ունենալ եւ պահել զօրաւոր կամք :

8. Ժումակալ , առաքինի , համեստ ու կարգապահ .— Առանց այս յատկութիւններու իւրացումին՝ կարելի չէ իրմէ գուրս ուրիշներ ալ տեսնել , դաղափարապաշտ ըլլալ :

9. Աշխատասէր :— Առանց զիտակց ու տեւական աշխատանքի՝ չկայ յառաջդիմութիւն , հետեւարար ցեղին ձառայելու կարելիութիւն :

10. Ազատ եւ անկախ Հայաստան պահանջող :— Ո՞վ Հայ ցեղի ապագան կը խորհի , պէտք է ձգտի Մայր Երկրի աղատութեան եւ աղղահաւաքման : Այս դաղափարներու խորհրդանիշերն են Մայիս 28-ը եւ Հայկական Եռագոյնը :

Դաւանանքի այս գիծերը տիրական եղած են ցեղակրօն շարժումի առաջին օրերէն իսկ , երբ կաղմակերպութիւնը սկսաւ չէզոք գետնի վրայ , բայց յստակօրէն հետեւելով աղղային-քաղաքական որոշուղղութեան մը , որ հարազատ է Հայ ժողովուրդի ստուար մեծամասնութեան , որովհետեւ կը համապատասխանէ մեր ցեղի գերազոյն շահերուն :

Այս կ'ապացուցանէ նաեւ Ցեղակրօնութեան կարգախօսը .—

ԼՕԶԱՐՆԸ , — Ո՞Չ . ԵՐԲԵՇՔ :

Այս է պատճառը , որ Ցեղակրօն Ուխտերու ա-

ուաջին Համագումարին իսկ, 1934 Յունիսի սկիզբը, Պատգամաւորներու միահամուռ փափաքը եղաւ մանել Հ. Յ. Դաշնակցութեան Դրօշակին տակ: Փափաքին յաջորդեց որոշումը եւ այդ օրէն Ցեղակրօն Ուխտերը դարձան Հ. Յ. Դաշնակցութեան պատանեկան-երիտասարդական միաւորները:

* * *

Դաւանանքին սերտօրէն կապուած է կազմակրպութիւնը, «որ Հնարաւորութիւն կը ստեղծէ միացած ուժերով հետապնդելու Ցեղակրօնութեան հիմնական գաղափարներուն իրականացումը»:

Ցեղակրօններու Ծրագիր-Կամոազիրին մէջ այս կազմակերպութեան նպատակը բանաձեւուած է հետեւեալ բառերով.—'

«Ստեղծել ցեղակրօն սերունդ մը, որուն անդամները ապրին եւ գործեն որպէս ցեղի հպատակն ու մարտիկը, ուր որ ալ ըլլան եւ ընկերային ի՞նչ դիրք ալ ունենան Հայաստանէն դուրս, Սփիւրքի մէջ»:

Երկսեռ պատանիներ ու երիտասարդներ մինչեւ 22 տարեկան, կրնան անդամակցիլ այս կազմակերպութեան, եթէ կ'ընդունին անոր դաւանանքը:

Կազմակերպութեան միաւորը Ուխտն է, որ առնուազն 7 անգամ կ'ունենայ: Ամէն Ուխտ ունի իր պետը, փոխ-պետը, քարտուղարը եւ գանձապահը:

Իրարու մօտիկ վայրերու մէջ գտնուող Ուխտերուն միջեւ կարգ մը հաստատելու եւ ընդհանուր ուղղութիւն մը տալու համար, զուտ գործնական պահանջի մը վրայ, կեանքի կոչուած են Շրջանային Մարմինները:

Ցեղակրօն Ուխտերու վերին մարմինն է Կեղրոնական Վարչութիւնը, որ կ'ընտրուի Ցեղակրօն

Պատգամաւորական Ժողովն եւ կը վարէ կազմակերպութեան բոլոր գործերը :

Պատգամաւորական Ժողովը ներկայացուցչական մարմին մըն է, որ կը գումարուի տարին մէկ անգամ : Ուխտերը՝ իրենց թիւի համաձայն, կունենան 1-3 պատգամաւորներ :

Պատգամաւորական Ժողովը կրնայ փոխոխութեան ենթարկել կազմակերպութեան Ծրագիր-Լանգագիրի յօդուածները, բացի դաւանանքին եւ նպատակին վերաբերածներէն :

* * *

Ուխտերու գործունեուրեան համար նախատեսուած են .—

1. Ընկերական հաւաքոյթներ, առնուազն ամեւսը երկու անգամ :

2. Ցեղային ինքնաճանաչման նորաստող պարբերական ասուլիսներ, նիւթ ունենալով Աղջային Պատմութենէն եւ աղատադրական շարժումներէն այս կամ այն դրուագը :

3. Մարզանք եւ դրօս :

4. Ուխտերու Ժողովներու եւ հաւաքոյթներու մէջ հայերէն լեզուն պարտադիր է :

Կ'արժէ այստեղ յիշել որ՝ կազմակերպութեան առաջին տարին իսկ Ուխտերէն շատեր կեղը . Վարչութեան հետ ունեցած իրենց թղթակցութիւնները կատարած են մայրենի լեզուով եւ պահանջած են որ կեղը . Վարչութիւնն ալ ընէ նոյնը եւ իրենց դրկէ միմիայն հայ լեզուով դրուած շրջաբերականներ :

5. Կազմակերպութեան անհրաժեշտ ծախքերուն մասնակցելու առաջադրութեամբ՝ ամէն Ուխտ, համաձայն իր վայրի պայմաններուն, կը սարքէ հասութարեր ձեռնարկներ :

6. Ուխտերը տեղին վրայ կրնան ծախսել իրենց
և կամուտի առ առաւելն կէսը : Մնացածը կը մտցը-
նեն կեզր . Վարչութեան սնառւկը :

* * *

Անդամակցութեան համար նկատի առնուած ևն
հետեւեալ պայմանները .—

1. Պատանին կամ երիտասարդը՝ Ուխտի մը
անդամակցելու առեն, կը վճարէ մուտքի նուազա-
գոյն գումարը, որ է 0.25 տոլար :

2. Իւրաքանչիւր անդամ ամսական կը վճարէ
0.10 տոլար ուխտատուրք :

3. Նոր ուխտակից մը կ'ընդունուի Ուխտի քը-
ւներու երկու երբորդի մեծամասնութեամբ :

4. Ուխտերու ներքին կեանքին մէջ պարտադիր
է խիստ կարգապահութիւնը : Վրիպողները կը
պատժուին Ուխտին կողմէ, քուէներու երկու եր-
բորդի մեծամասնութեամբ :

* * *

Յեղակրօն Ուխտերու պաշտ . տօներն են .—

1. Յեղակրօնութեան Օրը,— Յունուար 14:

2. Հայոց Սգատօնը,— Ապրիլ 24:

3. Հայաստանի Անկախութեան Տարեդարձը,—
Մայիս 28:

4. Դրօշակի Օրը,— Օգոստոս 10:

5. Հ . Յ . Դ . Դաշնակցութեան Օրը — Հոկտ . 1:

Այս հիմերու վրայ կեանքի կոչուած Ամերիկա-
հայ Յեղակրօնութիւնը , որուն իւրաքանչիւր ան-
դամը կ'ուխտէ իրականացնել իր կազմակերպու-
թեան դաւանանքն ու նպատակը , իր ցեղի լաւագոյն
ապագային հաւատքով զօտեպնդուած՝ ինքզինքը
կը նկատէ տարածարչներ ցրուած հայ նոր սե-
րունդի ընդհանուր կազմակերպութեան կորիզը :

VI

ՑԵՂԱԿՐՈՆՆԵՐՈՒ ԳՈՐԾՈՒՆՀՈՒԹԵԱՆ ԴԱՇՏԸ

Հայ նոր սերունդի այս կազմակերպութեան հիմնական ձգտումը դաստիարակչական է : Դաստիարակութիւն մը որ կը արուի դործնականօրէն, բնկերային կեանքի համար պատրաստելով եւ ընկերային կեանքին մէջ մացնելով միանդամայն :

Հետեւելով առողջ հոգին առողջ մարմնի մէջ հին՝ բայց իր արժէքով միշտ ալ նոր ճշմարտութեան, ցեղակրօն շարժումը իր առջեւ կը դանէ գործունէութեան ընդարձակ դաշտ մը, որուն զանազան մարզերը կը լրացնեն այս կամ այն պակասը ու կը կերտեն ամբողջութիւն մը :

Գաղափար մը տալու համար այն կարելիութիւններու մասին, որոնց առջեւ կը դտնուի ցեղակրօն ամէն Ուխտ, առնենք մարմնական եւ հոգեկան առողջութեան առաջնորդող ազդակները :

Մարզանիքը մարմնի բնականոն աճումին, հետեւաբար մարմնական առողջութեան հիմնական պայմաններէն մէկն է : Այս մասին երկու կարծիք գոյութիւն չունի : Կարեւորն այն է որ՝ մարզանքը կազմակերպուի նպատակայարմար ձեւով, գիտական հիմերու վրայ :

Այս առաջադրութիւնը իրականացնելու համար՝ անհրաժեշտ է ունենալ ձմեռնային մարզավայրեր, որոնցմէ կ'օգտուին նաեւ տաք եղանակներուն, երբ օդը անձրեւային է : Ցեղակրօն Ուխտերը իրենց վայրին նման մէկ շէնքէն օգտուելու մասին պիտի մտածեն, ի հարկէ, եւ ոչ թէ սեփական մը շինելու ետեւէ իյնան :

Մարմնական առողջութեան նպաստող ուրիշ մէկ մարդ կը ներկայացնեն խաղերը, որոնք աղատ մարզանքի ձևեն ունին եւ այլազանութեան հետ համելիութեան տարրեր աստիճան մը կը բերեն իրենց հետ :

Յատկապէս կազմակերպուած պտոյտներ ու արշաւներ, քիավարութեան, նշանառութեան փորձեր, լոգանիք եւ բանակում (քէմփ) ո'չ միայն մեծապէս կը նպաստեն մարմնի առողջութեան, այլ եւ նկարագրի լաւագոյն զիծերու մշակումին :

Մարմնակրթութեան այնքան մեծ կարեւորութիւն տուող մեր զարուն, մանաւանդ երբ Սփիւռքի հայ նոր սերունդը իր շուրջը կը տեսնէ հիւրընկալ երկիրներու մէջ՝ կիրարկուած ձեւերը, մեթոտները եւ տեսակները, աւելորդ է այս խնդրին վրայ աւելի երկար կանդնիլ :

* * *

Ինչպէս մարմինը հետզհետէ, հետեւողական մարզանքով կը տիրանայ առողջ կազմի, այնպէս ալ հոգին պէտք ունի իրեն յատուկ մարզանքի մը :

Մարմինին հետ կը զարդանան նաեւ պղտիկին զգացումները, զատողութիւնը, կամքը, մէկ խօսքով տարիներու ընթացքին կը կազմաւորուի նաեւ պատանիին ու երիտասարդին հոգին :

Բնանիքը, զպրոցը, համայնքը կարեւոր զեր կը կատարեն այս մարզին մէջ : Բայց նոյնքան կարեւոր զեր մը վերապահուած կը մնայ նոր սերունդի կազմակերպութեան :

Սևփական զրադարանը ընթերցարան մը, որ կարելիութեան սահմանին մէջ ունենայ հետաքըրքը բարական, ենթակայի տարիքին ու պահանջներուն համապատասխան զիրքերու եւ թերթերու լրիւ

Հաւաքածոյ մը, մեծապէս կը նպաստէ ինքնաշխատութեան միջոցով ինքնաղարդացում ձեռք բերելուն :

Ամէն Ռւփու իր սկզբնական շրջանին իսկ կրնայ հիմք զնել նման գրադարան-ընթերցարանի մը, Հոդչէ 1-2 տասնեակ դրքոյկներով ու թերթիկներով, որոնք տարիներու ընթացքին, անդգալարար, կը շատնան :

Թատրոն եւ շարժանկար մեծապէս կը ծառայեն գաստիարակչական նպատակին, եթէ նոր սերունդի առաջնորդներ ընեն իրենց թելաղբութիւնները: Ինչպէս ամէն լաւ դիրք ամէն տարիքի համար չէ, այնպէս ալ ամէն լաւ ներկայացում բոլորի պահանջները չի կրնար լրացնել:

Ամէն Ռւփու կրնայ ունենալ իր մէկ թատերախումբը, որ իր ուխտակիցներուն համար կը պատրաստէ յարմար ներկայացումներ :

Երգչախումբ եւ նուազախումբ կը կազմեն գաստիարակչական եւ միանդամայն դործունէութեան մէկ այլ աղջակ :

Մեր նոր սերունդի դրեթէ բոլոր անդամները սովորաբար նուազի գասեր կ'առնեն, զէթ քանի մը տարի: Երբ յարմար զեկավար մը դտնուի, ո'չ մէկ դժուարութիւն կը մնայ, որ արգելք ըլլայ նման տարրերը միացնելուն եւ նուազախումբը մը կազմելուն: Աւելի դիւրին է երգչախումբի կազմութիւնը:

Դասախօսութիւններ եւ զանազան դասընթացքներ կարելիութիւն կուտան լրացնելու Մայրենի Լեզուի, Ազգային Գատմութեան, Հայ Գրականութեան ծանօթութիւններու պակասը:

Հանդէս, տողանցք, տօնակատարութիւն առիթներ կը ստեղծեն որ կազմակերպութեան եւ ինքնաշ-

իստութեան միջոցով ձեռք բերուած կարողութիւնները դործագրուին :

Հանդէսի մը կազմակերպումը և իւրաքանչիւր ցեղակրօնի մասնակցութիւնը երդով, նուազով, արտասանութեամբ կամ ուղերձով՝ մեծապէս կը նըսպասան ևնթականներու հոգեկան զարգացումին, ինքնաշխատահութեան և դիտցածը դործագրելու կարողութեան մշակումին :

Տողանցքը կը լրացնէ ներքին տարրեր պահանջմանը մը և կը վարժեցնէ կարգապահութեան :

Տօնակատարութիւնը հանդէսի համար յիշատութուած տառելութիւններուն վրայ կ'աւելցնէ պղպային նշանաւոր դէպք կամ դէմք մը պատշաճօրէն յարդելու պարբուականութեան դիտակցութիւնը :

Վինարանական հաւաքոյը ները սորվածը տարրեր ձեւով մը դործագրելու պատեհութիւնը կուտան : Նախապէս զուշակել թէ ի՞նչ կրնայ ունենալ զիմարանող միւս կողմը՝ անակնկալի մը պարագայն՝ արագ խորհելու և փաստարկելու վարժութեան ձեռք բերումը՝ դիմացինին կարծիքները յարդելու բարեկրթութեան տիրացումը՝ այնպիսի ասաւելութիւններ ևն որ՝ ընկերային կեանքի համար պատրաստուազ ամէն անհատի համար կենսական նշանակութիւն ունին :

Մարմնական և հոգեկան այս բոլոր տեսակի ժարգանքներուն չնորհիւ՝ ամուր կոռուան մը կը ստանայ ամէն մէկ Ռւխտակիցի նկարագիրը, որ Բոլորը մէկի եւ մէկը բոլորի համար սկզբունքը կ'իւրացնէ ու կը դործագրէ :

Այսպէս է որ ամէն մէկ Ռւխտակիցի համար Ցեղակրօնութիւնը կը դառնայ ո'չ թէ խօսք ու ձեւ, այլ միս ու արիւն :

ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

ՄԵծ իմաստառէր Սոկրատէսին կը պատկանի յաւիտենական արժէք ներկայացնող պատգամի մը ձեւակերպումը, — Ճանչցի՛ր քեզ:

Ասիկա կենսական հրամայականն է, որուն ենթակայ է ամէն մէկ էակ: Նախնական շրջաններուն՝ մարդիկ բնաղղօրէն ենթարկուած են այս հրամայականին: Քաղաքակրթութեան զուգընթաց՝ հետզհետէ զիտակցօրէն հետապնդուած է այս պատգամը, որ դուրերու իմաստութեան մէկ խոտացումն է:

Ճանչցի՛ր քեզ խոսքերը շատ աւելի խոր իմաստունին, քան առաջին տպաւորութենէն կարելի է պատկերացնել:

Այս պատգամը կը նշանակէ որ՝ ամէն մարդմի՛ցու պէտք ունի ուսումնասուիրելու ինքոյինքը, ոյսինքն իւրաքանչիւր անհատ շարունակ պիտի քննէ իր կեանքին պայմանները, նիւթական թէ բարոյական: Ամէն խորհող էակ պիտի հարցնէ ինքն իրեն թէ՝ ի՞նչպէս եւ ինչո՞ւ կ'ապրի: Պիտի փորձէ հասկնալ թէ ի՞նչ կ'ուզէ: Պիտի չափէ իր կարողութիւնները ու պիտի ջանայ զարդացնել զանոնք: Ականջ պիտի զնէ իր հոգիի խորէն լսուող ձայնին եւ ըստ այնմ պիտի ձեւակերպէ իր պահանջներն ու ձգտումները:

Բայց մարդ կոչուածը կայուն սրարած մը չէ: Մեղմէ ամէն մէկը կը փոխուի ո՛չ միայն ամէն տարի, ամիս կամ շարաթ, այլ ամէն օր: Մեղմէ դուրս գտնուող ուժեր կ'աղղեն ո՛չ միայն մեր արտաքին պայմաններուն, այլ եւ մեր ներքին աշխարհին վըրայ: Այս կը նշանակէ որ մենք շարունակ պէտք

անինք հետեւելու մեջ իմաստասէրի պատղամին՝
ձանչցի'ր քեզ :

Ա՛չ ոք կրնայ դատել իր անձը իր ընտանիքն ու
ըրջապատէն : Ա՛չ ոք կրնայ իրմով սկսիլ աշխարհը :
Ա՛չ միայն իր ծնողներն ու պապերը, այլ եւ պատե-
րուն պապերը պէտք է ճանչցուին այն անձին կող-
մէ, որ կը փափաքի իրապէս ճանչնալ ինքինքը :

Ահա՛ թէ ինչու ձանչցի'ր քեզը իր խսկական ա-
ռաւմով կը նշանակէ ձանչցիր ցեղդ :

Ճանչցի'ր ցեղդ, այսինքն՝ ուսումնասիրէ՛ անոր
անցեալը, ուրիշ խօսքով սորպէ՛ անոր պատմութիւ-
նը, որ քու աչքերուդ առջեւ կը բերէ անոր արէ՛ է-
ները, ապրումներն ու ձգտումները :

Ճանչցի'ր ցեղդ, այսինքն՝ ապրէ՛ անոր ներկայ
կետնքը, քեզի զգա՛ անոր հաւաքականութիւնը կաղ-
մող շվթային մէկ օղակը :


Ճանչցի'ր ցեղդ, այսինքն՝ քո՛ւկը համարէ անոր
պահանջները և ըրէ՛ կարելիդ, որպէսողի իրակա-
նութիւն գառնան անոր ձգտումները :

Ճանչցի'ր ցեղդ, կը նշանակէ ուրեմն՝ ուսում-
նասիրէ՛ անոր անցեալը, ապրէ՛ անոր ներկան և
ժամանութեանդ առարկան զարձո՛ւր անոր ապա-
գան :

Լրացնելու համար այս կենսական պահանջները՝
լաւ սորվէ Մայրենի Լեզուդ, որովհետեւ անոր մո-
դական լապտերին լոյսը միայն յստակ կը դարձնէ
ցեղիդ պատմութիւնն ու մշակոյթը :

Ճանչցի'ր քեզ կը նշանակէ ճանչցի'ր քեզի ծը-
նունդ առևող հաւաքականութիւնը, այսինքն ցեղդ :

Դարերու այս հրամայականին ամենէն աւելի
պէտք ունի Հայ Նոր Սերունդը :



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I. Ամերիկահայ նոր Սերունդը 1933-էն առաջ	5
II. Շարժումին Սկիզբը	11
III. Ցեղակրօնութեան Խմաստը	15
IV. Հայ Ժողովուրդի Ցեղային Զգոսում- ներն ու Արժեքները	23
V. Ցեղակրօնութեան Գաւանաճը եւ կազ- մակերպութիւնը	29
VI. Ցեղակրօններու Գործունէութեան Գաշտը	34
VII. Ցեղակրօնութեան Պատգամը	38

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0016225

St"
-504.

A $\frac{\text{v}}{10241}$

